ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/34Շ-1

ք. Երևան

« 05 » « 10 » 2021թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Ա. Ազատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կամուրջշին» ՓԲԸ-ն. ի դեմս տնօրեն Ռ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման կմ 14+796 հատվածում գտնվող կամրջի վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն (Հավելված N 2):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել , կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն **100** տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից արտադրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 113 775 870 (մեկ հարյուր տասներեք միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որից 18 962 645 (տասնութ միլիոն ինը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության՝ կամ վերահսկողության կամ որոշումների ընդունման արդյունքում արձանագրվում է որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի 1-ին հատվածի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և	«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ
ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 6-րդ փ.40/1
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՀ 115004674509
ՀՀ 900011025815	ՀՎՀՀ 01201526
ՀՎՀՀ 02815457	տնօրեն
գլխավոր քարտուղարին փոխարինող	Ռ. Խաչատրյան
Ա. Արտաշյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«05» 20 Հավելված թիվ 1
2021թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/34Շ-1 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման կմ 14+796 հատվածում գտնվող կամրջի վերանորոգման աշխատանքների
(Ընդհանուր)

Հազ. դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	Սխեման 8.66+14.06+8.66 մ				
	Երկարությունը - 33մ				
	Բարձրությունը - 7.7 մ				
	Գաբարիտը Г-11.8+3.4+11.5 մ				
1	Կամրջի բազրիքների ապամոնտաժում ձեռքով, պահեստավորումով հետագա օգտագործման համար - L=66 մ	տ	0,726	120	87.12
2	Т-1-1.0 հավաքովի մայթի բլոկների ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	մ³	14,96	15	224.4
3	Բաժանիչ գոտու եզրաքարերի կազմատում ձեռքով վերադարձ սեփականատիրոջը- չափ 15x30:	գմ	90,3	6	541.8
4	Երթևեկային մասի ա/բ ծածկի կազմատում պնևմագործիքով, բարձումը էքս 0.65շտ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա h=17 սմ:	մ³	166,3	12	1995.6
5	Նույնը՝ պաշտպանիչ բետոնի h=4 սմ:	մ³	38,5	17	654.5
6	Նույնը՝ ջրամեկուսացման - հարթեցնող շերտի հետ միասին h=4 սմ:	մ³	38,5	17	654.5
7	Նույնը՝ բաժանիչ գոտու խճային շերտի համար h=12 սմ:	մ³	15,8	3.5	55.3
8	Դեֆորմացիոն կարերի կազմատում ձեռքով, բարձում ա/ի ձեռքով և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռ. վրա:	գմ	116	3.5	406
9	Եզրային թռիչքների ПР-9 սալերի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	տ	40,0	5	200
10	Կենտրոնական թռիչքի П-14 սալերի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա (П-18 կարճացրած):	տ	50,8	7	355.6

11	N1 թռիչքի աջ եզրային Т-ձև հեծանի մոնոլիտացման կարի ապամոնտաժում ձեռքով պնևմագործիքի օգտագործումով՝ բարձում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	մ³	0,52	36	18.72
12	Եզրային Т-ձև L=8.66 մ հեծանի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	տ	7,1	7	49.7
13	Լայնացված տեղամասերում՝ սալերի սահմաններում հավաքովի П1-4 անցումային սալերի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը:	մ³	12,22	18	219.96
14	Լայնացված և աջից վնասված հենարանի տեղամասերում հավաքովի պահարանային պատերի կազմատում ձեռքով պնևմագործիքի օգտագործումով՝ բարձում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա: Æ16 ամրանների կտրում 140 տեղ:	մ³	1,05	68	71.4
15	Հենարանների վերանորոգման շապիկի և պահարանային պատերի իրականացման համար գրունտի կազմատում էքս 0.65շտ բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա - IV-րդ կարգ:	մ³	65,9	5	329.5
16	Նույնը՝ ձեռքով գրունտի տեղափոխումը պատգարակներով մինչև 10 մ՝ կուտակումը կողքի հետագա հետլիցքի համար:	մ³	20,1	9	180.9
17	Ռիգելի վրա գտնվող գրունտի մաքրում ձեռքով, տեղափոխումը պատգարակներով մինչև 10 մ, բարձումը էքս 0.65շտ և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա - IV-րդ կարգ:	մ³	2,2	12	26.4
18	N2 հենարանի մոտ բետոնե պատի բեկորների կազմատում և բարձում էքս 0.65շտ բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա:	մ³	4	36	144
19	Նույն՝տեղամասում գրունտի կազմատում էքս 0.65շտ բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա - IV-րդ կարգ:	մ³	79,0	5	395
20	Տապաստների տեղադրման համար հողային աշխատանքներ էքս 0.65շտ կուտակում կողքի հետագա հետլիցքի համար- IV-րդ կարգ:	մ³	15,1	2	30.2
21	Նույնը՝ ձեռքով:	մ³	1,6	8	12.8
22	N2 հենարանի կանգնակի պաշտպանիչ բետոնի կազմատում ձեռքով պնևմագործիքի օգտագործումով, բարձումը ձեռքով ա/հ և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա:	մ³	0,14	48	6.72
23	Ավազկոպճային շերտի տեղադրում h=10սմ:	մ³	2,0	14	28
24	Պատի հիմքի իրականացում B20 դասի միաձույլ բետոնից L=33մ:	մ³	9,9	96	950.4
25	Պատի իրանի իրականացում B20 դասի միաձույլ բետոնից L=33մ:	մ³	19,8	116	2296.8
26	N3 հենարանի մոտ բետոնե պատի աճեցման միաձույլ B20 դասի բետոն:	մ³	5,11	116	592.76

27	N3 հենարանի մոտ բետոնե պատի շապիկի համար պահպանված տեղամասերի վրա անցքերի գայլիկոնում Ø30 մմ L_1=0.2 մ:	հատ	51	3.6	183.6
28	Անցքերի մեջ խարիսխների տեղադրում - Ø18 մմ L_1=0.5 մ: էպոքսիդացեմենտ. շաղախ - 0.0046 մ³:	տ	0,051	3000	153
29	N3 հենարանի մոտ բետոնե պատի շապիկի միաձույլ B20 դասի բետոն: Ամրանային ցանց BpÆ 5 100x100 մմ - 49.5 մ²:	մ³	6,75	140	945
30	N1,4 հենարանների բաժակների վրա անցքերի գայլիկոնում Ø30 մմ L_1=0.4 մ:	հատ	44	4.8	211.2
31	Անցքերի մեջ խարիսխների տեղադրում - Ø16 մմ L_1=1.0 մ: էպոքսիդացեմենտ. շաղախ - 0.009 մ³:	տ	0,0695	3000	208.5
32	N1 հենարանի ձախ կողմի պահարանային պատի միաձույլ ե/բ: Ամրան Ø12 A500c - 84.68 կգ, Ø10 A500c - 24.34 կգ: Առանձին ձողեր Ø25 A500c P=3.9 կգ - B20 դասի բետոն:	մ³	4,9	140	686
33	N1 հենարանի վնասված ռիգելը ամրացնող միաձույլ ե/բետոնի տեղադրում- B20 դասի: Ամրան Ø12 A500c - 199.7 կգ, Ø10 A500c - 118.45 կգ: Առանձին ձողեր Ø25 A500c P=13.5 կգ - B20 դասի բետոն:	մ³	33,5	130	4355
34	N4 հենարանի պահարանային պատի միաձույլ ե/բ-B20 դասի բետոն: Ամրան Ø12 A500c - 169.4 կգ, Ø10 A500c - 97.4 կգ: Առանձին ձողեր Ø25 A500c P=7.7 կգ:	մ³	9,8	160	1568
35	N2 հենարանի կանգնակի պաշտպանիչ շերտի վերականգնում Mapei կամ համանման բնութագրերով այլ ֆիրմայի ֆիբրային մանրաթելերով բաղադրությամբ բետոնի վերականգնիչով - b=5սմ:	մ²	5,85	65	380.25
36	Կանգնակների վերևի հատվածի վերանորոգում M200 մակնիշի ցեմենտային շաղախով - b=5սմ:	մ²	9,5	5	47.5
37	Ռիգելների եզրային տեղամասերի վրա ենթաթեքությունների միաձույլ B20 դասի բետոնի տեղադրում $h_{միջ.}$=6.5սմ:	մ³	1,22	100	122
38	РОЧ-СП տիպի հենարանային մասերի տեղադրում: Չափ 40x200x400մմ:	հատ	38	60	2280
39	Թռիչքային կառուցվածքի T-ձև L=8.66 մ հեծանի տեղադրում: Չափ 70 x 130 x 866 սմ, քաշը – 7.1 տ, ա.պ. Al=23 կգ/մ³, 35ГС=242 կգ/մ³:	հատ	1	1420	1420
40	Հեծանների մոնոլիտացման (միավորման) ե/բետոն - B25 դաս, ա.պ. Al=52.4 կգ/մ³-Ø 8Al:	մ³	0,52	160	83.2

41	Եզրային թռիչքների ПР-9 սալերի տեղադրում: ա.պ. Al=135.3 կգ/մ³, A500c=303.2 կգ/մ³:	հատ	8	1060	8480
42	Սալերի միավորման միաձույլ մանրահատիկ բետոն՝ 4 կցվանք (B25): ամրան Ø3Al=24.3 կգ:	մ³	1,94	110	213.4
43	Կենտրոնական թռիչքի նախալարված П-14.06 սալերի տեղադրում (П-18 կարճացրած):	հատ	4	2800	11200
44	Սալերի միավորման միաձույլ մանրահատիկ բետոն՝ 2 կցվանք (B25):	մ³	1,85	100	185
45	Տապաստների իրականացման ավազկապճային շերտի տեղադրում h=10սմ:	մ³	0,86	14	12.04
46	Տապաստների իրականացում միաձույլ ե/բետոնով - B25: Ամրան Æ18 A500c - 174.6 կգ, Æ14 A500c - 105.5 կգ, Æ8 A240 -71.5 կգ:	մ³	4,48	196	878.08
47	Խճային շերտ անցումային սալերի տակ h=10սմ	մ³	4,0	16	64
48	П1-4 անցումային սալերի հավաքովի ե/բետոն (13 հատ). չափ.25x98x400 սմ, քաշը - 2.35 տ:	մ³	12,22	210	2566.2
49	Անցումային սալերի միավորման ե/բետոն ա.պ. Al=19.0 կգ/մ³- Ø 3 (մանր խճով բետոն - B25):	մ³	0,55	110	60.5
50	Գրունտի հետ շփվող տեղամասերի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ²	53,8	2.4	129.12
51	Գրունտի հետլիցք բուլդոզերով կողքի կուտակված գրունտով խտացում պնևմատոփանով, շերտ-շերտ ջրի լցաբաշխումով:	մ³	33,8	3.5	118.3
52	Նույնը՝ ձեռքով:	մ³	3,0	6	18
53	Անցումային սալերի վրա հարթեցնող մանրահատիկ բետոնի տեղադրում h=3սմ, բետոն B25, W6:	մ³	6,8	110	748
54	Կարերի վրա 3 շերտ ռուբերոիդի տեղադրում, b_1=1.0մ, L_1=29.0 մ:	մ²	232,0	6.4	1484.8
55	Եզրային կարերի վրա պողպատե թերթի տեղադրում ամրացում թռիչքային կառուցվածքի վրա d=8մմ, b=600մմ (69.6մ²):	տ	4,37	1240	5418.8
56	Թռիչքային կառուցվածքի վրա սալի իրականացում: Ամրանային ցանց BpØ 5 100x100 մմ - 977.3 մ²: Բետոնի դասը B25, W6 Ջերմային անխզելի կարերի վրա ամրանային ցանց: Ø 18A500c - 2.32 տ, Ø 12A500c - 1.0266 տ:	մ³	149,7	136	20359.2
57	Թռ. կառուցվածքի և անցումային սալերի վրա ջրամեկուսացման իրականացում Техноэластомост C (ТехноНИКОЛЬ) կամ համանման բնութագրերով սոսնձային ջրամեկուսացում:	մ²	1211,0	8.2	9930.2
58	Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ մայթի բլոկների տեղադրման համար, շաղախի մակնիշը M200 h=2սմ:	մ²	92,4	2.2	203.28

59	Մայթերի Т-1-1.0 մակնիշի (22 հատ) բլոկների հավաքովի ե/բետոն (B30, F200). չափ. 86x165x299 սմ, բլոկի քաշը՝ - 2.1 տ, ա.պ. AI=100.5 կգ/մ³, AIII=136.9 կգ/մ³: Ներդիր մասեր. -10x80 մմ, P=0,06 տ; -10x160 մմ, P=0,12 տ; խարիսխներ Ø 10 AIII P=0,0432 տ:	մ³	18,48	440	8131.2
60	Մայթերի վրա ջրամեկուսացման իրականացում Техноэластомост С (ТехноНИКОЛЬ) կամ համանման բնութագրերով սոսնձային ջրամեկուսացում:	մ²	90,2	8.2	739.64
61	Մայթերի ավազային ասֆալտ h=3սմ:	մ²	66	3.6	237.6
62	Նախապես պահեստավորված բազրիքների տեղադրում՝ ներկումով ներկման մակերեսը - 47.8 մ²:	տ	0,726	100	72.6
63	Ավազակոպճային շերտ կցորդման անվահրիչների բլոկների տակ:	մ³	0,3	14	4.2
64	Կցորդման անվահրիչների բլոկների հավաքովի ե/բետոն. չափ. 15(50)x75(100)x150 սմ, քաշը՝ - 0.58 տ, ա.պ. AI=80.8 կգ/մ³:	մ³	0,936	250	234
65	Մայթերի հետ կցորդման տեղամասերում միաձույլ բետոնի իրականացում՝ B20դասի:	մ³	0,34	100	34
66	Բիտումի տեղադրում մայթի բլոկի և բետոնե սալիկի կարի միջև b=3 սմ, L=4.8մ:	տ	0,02	600	12
67	Բաժանիչ գոտու վրա պաշտպանիչ բետոնի տեղադրում-բետոնի դասը B25 W6, h=5սմ:	մ³	6,21	100	621
68	Բաժանիչ գոտու նոր բազալտե եզրաքարերի տեղադրում Չափ 0.15x0.23 մ: Բետոնի ծախսը-1.8 մ³ 100 գմ համար, B15 դաս:	գմ	90,3	14	1264.2
69	Բաժանիչ գոտու վրա պաշտպանիչ բետոնի վրա խճային շերտի տեղադրում h=18 սմ:	մ³	22,14	14	309.96
70	Բաժանիչ գոտու վրա մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում H=5սմ:	մ²	131,4	6	788.4
71	Ներքին շերտի մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում H=7սմ	մ²	771,8	8	6174.4
72	Վերին շերտի մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում H=6սմ	մ²	785,2	7	5496.4
73	Անցումային սալի վրա պաշտպանիչ բետոնի (B25,W6) տեղադրում: Ամրանային ցանց - Ø4 (100x100) - 240.7 մ²:	մ³	9,6	140	1344
74	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	194,3	1.4	272.02
75	Խիճ h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	238,4	2.1	500.64
76	Ներքին շերտի խոշորահատիկ ա/բ ծածկ h=6սմ	մ²	193,4	6	1160.4
77	Վերին շերտի մանրահատիկ ա/բ ծածկ h=4սմ	մ³	193,4	5	967
78	Անվահրիչների ուղղահայաց գծանշում:	մ²	59,4	2.4	142.56
79	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում - հոծ:	գմ	84	0.35	29.4

	Ընդամենը՝	113775.870

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման կմ 14+796 հատվածում գտնվող կամրջի վերանորոգման աշխատանքների

(2021 թվականին իրականացվելիք աշխատանքներ)

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Ծավալը
1	2	3	4
	Սխեման 8.66+14.06+8.66 մ		
	Երկարությունը - 33մ		
	Բարձրությունը - 7.7 մ		
	Գաբարիտը Г-11.8+3.4+11.5 մ		
1	Կամրջի բազրիքների ապամոնտաժում ձեռքով, պահեստավորումով հետագա օգտագործման համար - L=66 մ	տ	0,00
2	Т-1-1.0 հավաքովի մայթի բլոկների ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	$մ^3$	0,00
3	Բաժանիչ գոտու եզրաքարերի կազմատում ձեռքով վերադարձ սեփականատիրոջը- չափ 15x30:	գմ	0,00
4	Երթևեկային մասի ա/բ ծածկի կազմատում պնևմագործիքով, բարձումը էքս 0.65շտ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա h=17 սմ:	$մ^3$	0,00
5	Նույնը՝ պաշտպանիչ բետոնի h=4 սմ:	$մ^3$	0,00
6	Նույնը՝ ջրամեկուսացման - հարթեցնող շերտի հետ միասին h=4 սմ:	$մ^3$	0,00
7	Նույնը՝ բաժանիչ գոտու խճային շերտի համար h=12 սմ:	$մ^3$	0,00
8	Դեֆորմացիոն կարերի կազմատում ձեռքով, բարձում ա/ի ձեռքով և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռ. վրա:	գմ	0,00
9	Եզրային թռիչքների ПР-9 սալերի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	տ	0,00
10	Կենտրոնական թռիչքի П-14 սալերի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա (П-18 կարճացրած):	տ	0,00
11	N1 թռիչքի աջ եզրային Т-ձև հեծանի մոնոլիտացման կարի ապամոնտաժում ձեռքով պնևմագործիքի օգտագործումով՝ բարձում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	$մ^3$	0,00
12	Եզրային Т-ձև L=8.66 մ հեծանի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	տ	0,00
13	Լայնացված տեղամասերում՝ սալերի սահմաններում հավաքովի П1-4 անցումային սալերի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը:	$մ^3$	0,00

14	Լայնացված և աջից վնասված հենարանի տեղամասերում հավաքովի պահարանային պատերի կազմատում ձեռքով պնևմագործիքի օգտագործումով՝ բարձում և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա: Ø 16 ամրանների կտրում 140 տեղ:	մ³	0,00
15	Հենարանների վերանորոգման շապիկի և պահարանային պատերի իրականացման համար գրունտի կազմատում էքս 0.65շտ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա - IV-րդ կարգ:	մ³	0,00
16	Նույնը՝ ձեռքով գրունտի տեղափոխումը պատգարակներով մինչև 10 մ՝ կուտակումը կողքի հետագա հետլիցքի համար:	մ³	0,00
17	Ռիգելի վրա գտնվող գրունտի մաքրում ձեռքով, տեղափոխումը պատգարակներով մինչև 10 մ, բարձումը էքս 0.65շտ և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա - IV-րդ կարգ:	մ³	2,2
18	N2 հենարանի մոտ բետոնե պատի բեկորների կազմատում և բարձում էքս 0.65շտ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա:	մ³	4
19	Նույն տեղամասում գրունտի կազմատում էքս 0.65շտ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա - IV-րդ կարգ:	մ³	79,0
20	Տապաստների տեղադրման համար հողային աշխատանքներ էքս 0.65շտ կուտակում կողքի հետագա հետլիցքի համար- IV-րդ կարգ:	մ³	15,1
21	Նույնը՝ ձեռքով:	մ³	1,6
22	N2 հենարանի կանգնակի պաշտպանիչ բետոնի կազմատում ձեռքով պնևմագործիքի օգտագործումով, բարձումը ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա:	մ³	0,14
23	Ավազկոպճային շերտի տեղադրում h=10սմ:	մ³	2,0
24	Պատի հիմքի իրականացում B20 դասի միաձույլ բետոնից L=33մ:	մ³	9,9
25	Պատի իրանի իրականացում B20 դասի միաձույլ բետոնից L=33մ:	մ³	19,8
26	N3 հենարանի մոտ բետոնե պատի աճեցման միաձույլ B20 դասի բետոն:	մ³	5,11
27	N3 հենարանի մոտ բետոնե պատի շապիկի համար պահպանված տեղամասերի վրա անցքերի գայլիկոնում Ø30 մմ L_1=0.2 մ:	հատ	51
28	Անցքերի մեջ խարիսխների տեղադրում - Ø18 մմ L_1=0.5 մ: էպոքսիդացեմենտ. շաղախ - 0.0046 մ³:	տ	0,051
29	N3 հենարանի մոտ բետոնե պատի շապիկի միաձույլ B20 դասի բետոն: Ամրանային ցանց Bp Ø 5 100x100 մմ - 49.5 մ²:	մ³	6,75
30	N1,4 հենարանների բաժակների վրա անցքերի գայլիկոնում Ø30 մմ L_1=0.4 մ:	հատ	0
31	Անցքերի մեջ խարիսխների տեղադրում - Ø16 մմ L_1=1.0 մ: էպոքսիդացեմենտ. շաղախ - 0.009 մ³:	տ	0,00
32	N1 հենարանի ձախ կողմի պահարանային պատի միաձույլ ե/բ: Ամրան Ø12 A500c - 84.68 կգ, Ø10 A500c - 24.34 կգ: Առանձին ձողեր Ø25 A500c P=3.9 կգ - B20 դասի բետոն:	մ³	0,00

33	N1 հենարանի վնասված ռիգելը ամրացնող միաձույլ ե/բետոնի տեղադրում- B20 դասի: Ամրան Ø12 A500c - 199.7 կգ, Ø10 A500c - 118.45 կգ: Առանձին ձողեր Ø25 A500c P=13.5 կգ - B20 դասի բետոն:	մ³	0,00
34	N4 հենարանի պահարանային պատի միաձույլ ե/բ-B20 դասի բետոն: Ամրան Ø12 A500c - 169.4 կգ, Ø10 A500c - 97.4 կգ: Առանձին ձողեր Ø25 A500c P=7.7 կգ:	մ³	0,00
35	N2 հենարանի կանգնակի պաշտպանիչ շերտի վերականգնում Mapei կամ համանման բնութագրերով այլ ֆիրմայի ֆիբրային մանրաթելերով բաղադրությամբ բետոնի վերականգնիչով - b=5սմ:	մ²	5,85
36	Կանգնակների վերևի հատվածի վերանորոգում M200 մակնիշի ցեմենտային շաղախով - b=5սմ:	մ²	9,5
37	Ռիգելների եզրային տեղամասերի վրա ենթաթեքությունների միաձույլ B20 դասի բետոնի տեղադրում $h_{միջ.}$=6.5սմ:	մ³	1,22
38	РОЧ-СП տիպի հենարանային մասերի տեղադրում: Չափ 40x200x400մմ:	հատ	0
39	Թռիչքային կառուցվածքի T-ձև L=8.66 մ հեծանի տեղադրում: Չափ 70 x 130 x 866 սմ, քաշը – 7.1 տ, ա.պ. Al=23 կգ/մ³, 35ГС=242 կգ/մ³:	հատ	0,00
40	Հեծանների մոնոլիտացման (միավորման) ե/բետոն - B25 դաս, ա.պ. Al=52.4 կգ/մ³-Ø 8Al:	մ³	0,00
41	Եզրային թռիչքների ПР-9 սալերի տեղադրում: ա.պ. Al=135.3 կգ/մ³, A500c=303.2 կգ/մ³:	հատ	0,00
42	Սալերի միավորման միաձույլ մանրահատիկ բետոն՝ 4 կցվանք (B25): ամրան Ø3Al=24.3 կգ:	մ³	0,00
43	Կենտրոնական թռիչքի նախալարված П-14.06 սալերի տեղադրում (П-18 կարճացրած):	հատ	0,00
44	Սալերի միավորման միաձույլ մանրահատիկ բետոն՝ 2 կցվանք (B25):	մ³	0,00
45	Տապաստների իրականացման ավազկապճային շերտի տեղադրում h=10սմ:	մ³	0,00
46	Տապաստների իրականացում միաձույլ ե/բետոնով - B25: Ամրան Æ18 A500c - 174.6 կգ, Æ14 A500c - 105.5 կգ, Æ8 A240 -71.5 կգ:	մ³	0,00
47	Խճային շերտ անցումային սալերի տակ h=10սմ	մ³	0,00
48	П1-4 անցումային սալերի հավաքովի ե/բետոն (13 հատ). չափ.25x98x400 սմ, քաշը - 2.35 տ:	մ³	0,00
49	Անցումային սալերի միավորման ե/բետոն ա.պ. Al=19.0 կգ/մ³- Ø 3 (մանր խճով բետոն - B25):	մ³	0,00
50	Գրունտի հետ շփվող տեղամասերի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ²	0,00
51	Գրունտի հետլիցք բուլդոզերով կողքի կուտակված գրունտով խտացում պնևմատոփանով, շերտ-շերտ ջրի լցաբաշխումով:	մ³	0,00
52	Նույնը՝ ձեռքով:	մ³	0,00
53	Անցումային սալերի վրա հարթեցնող մանրահատիկ բետոնի տեղադրում h=3սմ, բետոն B25, W6:	մ³	0,00

54	Կարերի վրա 3 շերտ ռուբերոիդի տեղադրում, b_1=1.0մ, L_1=29.0 մ:	մ²	0,00
55	Եզրային կարերի վրա պողպատե թերթի տեղադրում ամրացում թռիչքային կառուցվածքի վրա d=8մմ, b=600մմ (69.6մ²):	տ	0,00
56	Թռիչքային կառուցվածքի վրա սալի իրականացում: Ամրանային ցանց ВрØ 5 100x100 մմ - 977.3 մ²: Բետոնի դասը B25, W6 Ջերմային անխզելի կարերի վրա ամրանային ցանց: Ø 18A500c - 2.32 տ, Ø 12A500c - 1.0266 տ:	մ³	0,00
57	Թռ. կառուցվածքի և անցումային սալերի վրա ջրամեկուսացման իրականացում Техноэластомост С (ТехноНИКОЛЬ) կամ համանման բնութագրերով սոսնձային ջրամեկուսացում:	մ²	0,00
58	Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ մայթի բլոկների տեղադրման համար, շաղախի մակնիշը M200 h=2սմ:	մ²	0,00
59	Մայթերի T-1-1.0 մակնիշի (22 հատ) բլոկների հավաքովի ե/բետոն (B30, F200). չափ. 86x165x299 սմ, բլոկի քաշը՝ - 2.1 տ, ա.պ. AI=100.5 կգ/մ³, AIII=136.9 կգ/մ³: Ներդիր մասեր. -10x80 մմ, P=0,06 տ; -10x160 մմ, P=0,12 տ; խարիսխներ Ø 10 AIII P=0,0432 տ:	մ³	0,00
60	Մայթերի վրա ջրամեկուսացման իրականացում Техноэластомост С (ТехноНИКОЛЬ) կամ համանման բնութագրերով սոսնձային ջրամեկուսացում:	մ²	0,00
61	Մայթերի ավազային ասֆալտ h=3սմ:	մ²	0,00
62	Նախապես պահեստավորված բազրիքների տեղադրում՝ ներկումով ներկման մակերեսը - 47.8 մ²:	տ	0,00
63	Ավազակոպճային շերտ կցորդման անվահրիչների բլոկների տակ:	մ³	0,00
64	Կցորդման անվահրիչների բլոկների հավաքովի ե/բետոն. չափ. 15(50)x75(100)x150 սմ, քաշը՝ - 0.58 տ, ա.պ. AI=80.8 կգ/մ³:	մ³	0,00
65	Մայթերի հետ կցորդման տեղամասերում միաձույլ բետոնի իրականացում՝ B20դասի:	մ³	0,00
66	Բիտումի տեղադրում մայթի բլոկի և բետոնե սալիկի կարի միջև b=3 սմ, L=4.8մ:	տ	0,00
67	Բաժանիչ գոտու վրա պաշտպանիչ բետոնի տեղադրում- բետոնի դասը B25 W6, h=5սմ:	մ³	0,00
68	Բաժանիչ գոտու նոր բազալտե եզրաքարերի տեղադրում Չափ 0.15x0.23 մ: Բետոնի ծախսը-1.8 մ³ 100 գմ համար, B15 դաս:	գմ	0,00
69	Բաժանիչ գոտու վրա պաշտպանիչ բետոնի վրա խճային շերտի տեղադրում h=18 սմ:	մ³	0,00
70	Բաժանիչ գոտու վրա մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում H=5սմ:	մ²	0,00
71	Ներքին շերտի մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում H=7սմ	մ²	0,00

72	Վերին շերտի մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում H=6սմ	մ²	0,00
73	Անցումային սալի վրա պաշտպանիչ բետոնի (B25,W6) տեղադրում: Ամրանային ցանց - Ø4 (100x100) - 240.7 մ²:	մ³	0,00
74	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	0,00
75	Խիճ h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	0,00
76	Ներքին շերտի խոշորահատիկ ա/բ ծածկ h=6սմ	մ²	0,00
77	Վերին շերտի մանրահատիկ ա/բ ծածկ h=4սմ	մ³	0,00
78	Անվահրիչների ուղղահայաց գծանշում:	մ²	0,00
79	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում - հոծ:	գմ	0,00

** *Կապալառուն աշխատանքները կատարում է*

Հատաբաժին 1՝ *Մ* -4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման կմ 14+796 հատվածում գտնվող կամրջի հատվածում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025815
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Ա.Ազատյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 6-րդ փ.40/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004674509
ՀՎՀՀ 01201526
տնօրեն
Ռ. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«05» 10 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/34Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման կմ 14+796 հատվածում գտնվող կամրջի վերանորոգման աշխատանքների

(Ընդհանուր)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 240 օր հետո
1	Նախապատրաստական և ապամոնտաժման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
2	Հենարանների վերանորոգման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո
3	Ռիգելների վերանորոգման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո
4	Հենարանային մասերի տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 110 օր հետո
5	Եզրային թռիչքների ՊԲ-9 սալերի մոնտաժում և նոր սալերի տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 160 օր հետո
6	Միջանկյալ թռիչքների Ռ-14 սալերի մոնտաժում և նոր սալերի տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 170 օր հետո

6	**Անցումային սալերի վերանորոգում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո
7	**Սալերի միավորման միաձույլ բետոնի ամրցումով**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 190 օր հետո
8	**Դեֆորմացիոն կարերի իրականացում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 200 օր հետո
9	**Թռիչքային կոնստրուկցիաների վրա ծածկի շերտերի տեղադրում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 220 օր հետո
10	**Մայթի նորոգում և մայթերի ասֆալտապատում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 230 օր հետո
11	**Անվնասության գոտիների հորիզոնական նշագծում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 240 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 240 օր հետո, բայց ոչ ուշ, քան Ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա նոյեմբերի 30-ը**

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման կմ 14+796 հատվածում գտնվող կամրջի վերանորոգման աշխատանքների

(2021 թվականին իրականացվելիք աշխատանքներ)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը

0	**Լաբորատոր փորձարկումներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո
1	**Նախապատրաստական և ապամոնտաժման աշխատանքներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո
2	**Հենարանների վերանորոգման աշխատանքներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո
3	**Ռիգելների վերանորոգման աշխատանքներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 85 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան Ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա նոյեմբերի 30-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025815
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Ա. Ազատյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 6-րդ փ.40/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004674509
ՀՎՀՀ 01201526
տնօրեն
Ռ. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 05 » 10 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/34Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | | |

Հավելված թիվ 4
«05» 10 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/34Շ-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«05» 20 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/34Շ-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն